ԿԻՄԵՐԱ–ՍԿՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ
(Ըստ հնագիտական տվյալների)

ԳԱՐԵԳԻՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Հնագիտական ուսումնասիրություններում վաղուց տեղ է գտել այն միտքը, որ Այսրկովկասի մ. թ. ա. VII–VI դդ. մշակույթում դիտվում են երեք բաղադրիչ տարրեր՝ տեղական, ուրարտական և սկյութական: Այս կարծիքին էին Բ. Բ. Պիոտրովսկին[1] *և նրա հետևորդները: Հիշյալ թեզի կողմնակիցներից Հ. Ա. Մարտիրոսյանը հետագայում որոշ չափով վերանայում է այդ տեսակետը՝ համարելով, որ Հայաստանի մ. թ. ա. VII–VI դդ. մշակույթում ի հայտ են գալիս երկու բաղադրիչներ՝ տեղական (արևելահայկական) և ուրարտական: Միևնույն ժամանակ նկատվում են սերտ մշակութային կապեր սկյութական ցեղախմբերի հետ*[2]*:*

Քանի որ նախկինում կիրառված առանձին իրերի ընտրության սկզբունքը[3] *կարող է նպաստել միայն մշակութային առնչությունների պարզաբանմանը, ուստի մեր ուսումնասիրությունը սկսում ենք մշակութակազմիչ համալիրների առանձնացումից և հետազոտումից: Կիմերների և սկյութների թաղման ծեսերին բնորոշ առանձնահատկություններից են՝* ներթող/իջեցուկ թաղումները, *որոնք քիչ չեն մեր տարածաշրջանի համաժամանակյա դամբանադաշտերում,* մարդակերպ մահարձանի առկայությունը *դամբանային համալիրի կազմում, կմախքի՝* մեջքի վրա ձգված դիրքը, մարդկանց զոհաբերությունները, ձիու *և/կամ* ձիասարքի *տեղադրումը դամբարանում*[4]*: "Կիմերա-սկյութական" դամբարաններում այժմ փաստագրվել են մի շարք նոր հատկանիշներ.* բարձր *կամ* ցածր հարթակի *կամ* ցանկապատի *գոյության դեպքեր, հանդիպում են* կոր պատ(եր)ով *օժտված թաղման կառույցներ: Այստեղ քննարկվելու է նաև թաղման ծիսակարգի այնպիսի կարևոր բաղադրիչ, ինչպիսին* աճյունի հանգչելատեղն *է: Կենդանիների զոհաբերության*

---

[1] Б. Б. П и о т р о в с к и й. Археология Закавказья. Л., 1949, с. 115, 129; *Նույնի՝* Кармир–Блур, I. Ереван, 1950, с. 12.

[2] А. А. М а р т и р о с я н. Армения в эпоху бронзы и раннего железа. Ереван, 1964, с. 291.

[3] С. А. Е с а я н, М. Н. П о г р е б о в а. Скифские памятники Закавказья. М., 1985, с. 19, 139 – 141.

[4] G. T u m a n y a n. The Cimmerian–Scythian Sepulchres of the Armenian Highland.– Aramazd, V/2, 2010, pp. 189–191; G. T u m a n y a n. Cimmerians and Scythians in the Armenian Highland (Archaeological Formulation of the Problem).– Journal of Armenian Studies, № 2, 2016, pp. 30–32.

համակարգում ձիու *հետ գրանցվել են* շան/գայլի, առյուծի զոհաբերության *մի շարք փաստեր:*

Այսպես, ներթող "սկյութական" թաղումներ կատարվել են Արուճի, Արտաշավանի, Քարաշամբի, Լոռի բերդի և այլ դամբանադաշտերում:

Բարձր կամ ցածր հարթակի և ցանկապատ-միջնորմի կառուցումը պայմանավորված է դամբանախցի տվյալ հատվածը մյուսներից առանձնացնելու անհրաժեշտությամբ: Նման հարթակով են օժտված Խոտանոցի - 1, Լոռի բերդի - 4 կրոմլեխների, Կարճաղբյուրի -23 դամբարանի[5], Ախլաթյանի - 3[6], Խոջալիի - 2[7], Հրաքոտ-Պերոժի Փոքր դամբանաբլուրի[8], Մինգեչաուրի II և V դամբանաբլուրների[9] թաղման սրահները: Ցանկապատ-միջնորմով են օժտված Ծովակի - 9, Անգեղակոթի - 1 – - 3 դամբանաթմբերի թաղման խցերը[10]:

Կոր պատով են օժտված Լոռի բերդի - 4 կրոմլեխի[11] և - 111 դամբանի[12] թաղման սրահները, Կարճաղբյուրի - 1 դամբարանի (1977 թ. պեղումներ) թաղման խուցը[13], Վարդենիսի հիմնահողային դամբանախուցը և Սևանի ավազանի որոշ այլ դամբարաններ[14]:

Սկյութական մշակույթին առնչվածությունը նաև կարող է հուշել մարդակերպ արձանների առկայությունը դամբանային համալիրի կազմում: Այս կոթողների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հայտնաբերել մարդկանց լո-

---

[5] *Օ. Խնկիկյան. Շիրակավանի մ. թ. ա. VII–VI դարերի դամբարանները.– Գիտական աշխատություններ, հ. II, Գյումրի, 1999, էջ 21:*

[6] *Մ. Հասրաթյան. Հնագիտական հետազոտություններ Միսիանում.– Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1985, էջ 171:*

[7] К. Х. Кушнарева. Ходжалинский могильник.– ИФЖ, 1970, № 3, с. 111.

[8] А. А. Иессен. Из исторического прошлого Мильско–Карабахской степи.– Материалы и исследования по археологии СССР, № 125. М.–Л., 1965, с. 23.

[9] Г. М. Асланов, Р. М. Ваидов, Г. И. Ионе. Древний Мингечаур (*այսուհետև* 'Г. М. Асланов и др.). Баку, 1959, с. 92, 115.

[10] *Մ. Հասրաթյան. նշվ. աշխ., էջ 174:*

[11] С. Г. Деведжян. Лори-Берд, 1. Ереван, 1981, с. 59–60, рис. 21.

[12] *Տեղեկությունը քաղել ենք Լոռի բերդի դամբարանադաշտի պեղումների վերաբերյալ Ս. Դևեջյանի ներկայացրած հաշվետվությունից Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտխորհրդի ժամանակ (2014 թ., ապրիլ):*

[13] А. О. Мнацаканян. Раскопки могильников у селения Атарбекян в Армянской ССР.– Краткие сообщения Института истории материальной культуры *(այսուհետև* 'КСИИМК), вып. 60, 1955, с. 34, рис. 8,2; *Ի. Ա. Կարապետյան. Հայաստանի նյութական մշակույթը մ. թ. ա. VI–IV դդ., Երևան, 2003, էջ 28:*

[14] А. О. Мнацаканян. Археологические находки в селении Басаргечар Армянской ССР. – КСИИМК, вып. 60, 1955, с. 39–40. *Հ. Մնացականյանի կարծիքով, Հայաստանում հիմնահողային դամբանախցերի գոյությունը հնարավոր չէ կապել քարի բացակայության հետ:*

կալ ընդհանրությունների միջև եղած կապերը, պարզել նրանց սփռման տարածաշրջաններն ու այլն[15]*: Էթիունյան թաղման համալիրներին բնորոշ են ուղղանկյուն և եռանկյուն պրիզմայաձև կամ բրգաձև մենաքարերը, մի քանի մետր բարձրությամբ կոթող-մահարձանները, որոնք տարածված են Հայաստանի վաղերկաթեղարյան դամբարանադաշտերում*[16]*: Ուրարտական մշակույթին բնորոշ են վերին մասում կորացող ուղղանկյուն պրիզմայաձև հուշակոթողները*[17]*: Էջմիածնի Մայր տաճարի բեմի տակ գտնված բազալտե կոթողը*[18] *համադրվում է Զվարթնոցի և Ոսկեբլուրի (Ճմին) նմանատիպ հուշակոթողներին, որոնք ուրարտական մշակույթի արգասիք են*[19]*: Քննարկվող տիպին է պատկանում նաև Կելիշինի ար-*

---

[15] Д. С. Раевский. Модель мира скифской культуры. М., 1985, с. 78, 140–142; В. А. Ильинская. Скифы и Кавказ (тезисы доклада).– Археологический сборник, вып. 23. Л., 1983, с. 56; Е. В. Антонова. Антропоморфная скульптура древних земледельцев Передней и Средней Азии. М., 1977, с. 6.

[16] *Ե. Լալայան. Հուղարկավորության և գերեզմանների զարգացումը Հայաստանում.– Տեղեկագիր ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի, 1928, - 3, էջ 87–91, նկ. 4–6, նույնի՝ Դամբանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ 63–66, նկ. 14–16, Հ. Ա. Մարտիրոսյան. Ուշ բրոնզեդարյան բնակավայրեր և դամբարանադաշտեր, Երևան, 1969, էջ 23, Գ. Արեշյան, Հ. Սիմոնյան. ԵՊՀ-ի հայագիտական հետազոտությունների պրոբլեմային լաբորատորիայի 1975 թ. կատարած հնագիտական աշխատանքները.– "Բանբեր Երևանի համալսարանի", 1976, № 1, էջ 287, Գ. Արեշյան. Շամիրամի հուշարձանախմբի սիստեմատիկ պեղումների տասնամյակը.– Հայկական ՍՍՀ-ում 1983–1984 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան (այսուհետև՝ ԴՀԱԱ), զեկուցումների թեզիսներ, Երևան, 1985, էջ 13,* O. S. Xnkikyan. Syunik՝ During the Bronze and Iron Ages. Barrington, 2002, pp. 60, 65–66; *Գ. Թումանյան. Հայաստանի ուշբրոնզեդարյան դամբարանների կառուցվածքը.– ՊԲՀ, 2003, № 1, էջ 177–179, աղ. V,2, Ա. Քալանթարյան, Հ. Մելքոնյան. Հնագիտական աշխատանքները Հայաստանում 1990–2003 թթ. (հիմնական արդյունքները), Երևան, 2005, էջ 55:*

[17] F. W. KΦnig. Handbuch der chaldischen Inschriften, T. II. Graz, 1957, S. 250–260, Taf. 119–121; *Գ. Ա. Ղափանցյան. Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 142:*

[18] *Ակնարկ հայ ճարտարապետության պատմության, Երևան, 1964, նկ. 38:*

[19] Г. А. Тирацян. К вопросу о градостроительной структуре и топографии древнего Валаршапата.– ИФЖ, 1977, № 2, с. 84; T. Цzgъz. Altintepe, II. Tombs, storehouse and ivories.– Tъrk Tarih Kurumu Yaymlarindan, V Seri, № 27. Ankara, 1969, pp. 70–71, 73–74, fig. 29–33, pl. XXVI, XXVII.

ձանագրակոթողը[20]*, իսկ Թոփրակ կալեում գտնված մի կնքադրոշմ պատկերում է համանման երեք կոթողների առջև կատարվող ծիսական արարողությունը*[21]*:*

Մարդակերպ տուֆե մահարձան է հայտնաբերվել Լոռի բերդի դամբարանադաշտի - 63 դամբարանի 2-րդ խցում (աղ. I, 1)[22]*: Ենթադրվում է, որ Մեծամորում*[23]*, Շավարշավանում*[24] *և Հայկաձորում*[25] *հայտնաբերված մարդակերպ քարե կուռքերը սկզբնապես կանգնեցված են եղել դամբարանների վրա: Լոռի բերդում գտնված մահարձանը, որն ըստ Ս. Դևեջյանի, Հայաստանի մ. թ. ա. I հազարամյակին բնորոշ քանդակագործության նմուշներից է, "համեմատվում է նաև ուշ ուրարտական և սկյութական մարդակերպ արձանների հետ, թվագրվում է մ. թ. ա. VII–IV դարերով"*[26]*: Սկյութական համարվող նման մահարձաններ են հայտնի Վրաստանում*[27]*, Հյուսիսային Կովկասում, Սև ծովի ավազանում (աղ. I,2) և այլուր*[28]*: Սկյութական*

---

[20] M. S a l v i n i. La civilta dell'Urartu.– Le Scienze: edizione italiana di Scientific American, num. 204, an. XVIII, vol. XXXV. Milano, 1985, p. 78.

[21] Б. Б. П и о т р о в с к и й. Ванское царство (Урарту). М., 1959, с. 228, рис. 73; *Կ. Լ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Ուրարտական ճարտարապետությունը.– Հայկական ճարտարապետության պատմություն, հ. 1, Երևան, 1996, էջ 174:*

[22] *Ս. Դ և ե ջ յ ա ն. Լոռի բերդի 1989–1990 թթ. պեղումների արդյունքները.– ԴՀԱԱ, 1991, էջ 40–41, Հին Հայաստանի ոսկին (մ. թ. ա. III հազարամյակ – մ. թ. XIV դար), Երևան, 2007, էջ 138–139, նկ. 41;* J. S a n t r o t (direct.). Armnnie. Trnsors de l'Armnnie ancienne. Paris, 1996, pp. 116, 127, 160; S. D e v e d j y a n. Stone Stelae in the Burial Ground of Lori Berd.– Aramazd, IV/2, 2009, p. 146, fig. 1,1; tab. V.

[23] *Է. Վ. Խ ա ն զ ա դ յ ա ն, Կ. Հ. Մ կ ր տ չ յ ա ն, Է. Ս. Պ ա ր ս ա մ յ ա ն. Մեծամոր, Երևան, 1973, էջ 135, նկ. 137–141:*

[24] С. А. Е с а я н. Древняя культура племен Северо–Восточной Армении. Ереван, 1976, с. 222, 229, рис. 146,1.

[25] *Հ. Պ ե տ ր ո ս յ ա ն, Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Ա. Փ ի լ ի պ ո ս յ ա ն, Հ. Հ ա կ ո բ յ ա ն, Վ. Ս ա ֆ ա ր յ ա ն, Լ. Կ ի ր ա կ ո ս յ ա ն. Արցախի Տիգրանակերտի և շրջակայքի հնագիտական հետազոտության առաջին արդյունքները.– Հին Հայաստանի մշակույթը, XIV, Երևան, 2008, էջ 189:*

[26] *Ս. Դ և ե ջ յ ա ն. Քարե պաշտամունքային արձանները Լոռի բերդի դամբարանադաշտում.– ԴՀԱԱ, 1996, էջ 21–22:*

[27] G. M e h n e r t. Skythika in Transkaukasien. Reiternomadische Sachkultur im archäologischen Fundkontext. Wiesbaden, 2008, S. 88–89, 137, Taf. 95,12,13; В. А. И л ь и н с к а я, А. И. Т е р е н о ж к и н. Скифия VII–IV вв. до н.э. Киев, 1983, с. 76, рис. 1–4; В. С. О л ь х о в с к и й, И. Н. Х р а п у н о в. Крымская Скифия. Симферополь, 1990, с. 54.

[28] Н. М. Б о к и й, В. С. О л ь х о в с к и й. Раннескифский курган на днепровском Правобережье.– «Российская археология», 1994, № 2, с. 157–160, рис. 4; Е. В. В л а с о в а. Скифский рог.– Античное Причерноморье. Сборник статей по классической археологии. СПб., 2000, с. 51–52, рис. 1, 2; Н. Г. Е л а г и н а. Скифские антропоморфные стелы Николаевского музея.– «Советская археология» (*այսուհետև* ՍԱ), 1959, № 2, с. 187.

կոթողային քանդակագործությունը կոչված էր մեծարելու հերոսացված նախնիներին[29]:

"Կիմերա-սկյութական" դամբարաններին բնորոշ է դիաթաղման եղանակը, որը տարբերակման ցուցիչ չի կարող ծառայել դրանց և տեղական (էթիունյան) թաղումների միջև: Առավել նպատակահարմար է հանգուցյալի կմախքի դիրքին անդրադառնալը: Ննջեցյալը մեջքի վրա ձգված դիրքով է հուղարկավորվել Գարդմանի Սարիթեփե բնակատեղի մշակութային շերտում բացված հիմնահողային դամբարանում[30]: Նման դիրքով ամփոփված կմախքներ են հայտնաբերվել Խոջալիի, Ներքին Հոռաթաղի մ. թ. ա. VII–VI դարերով թվագրվող դամբարաններում, որոնցում առկա են նաև սկյութական թաղումներին բնորոշ արտեֆակտեր[31]: Գետաբեկի դամբանադաշտի - 42 սալարկղում և Չինարիի (Ղարաբուլաղի) - 5(91) դամբանաբլրում դիակներն ամփոփված են եղել մեջքի վրա ձգված դիրքով[32]: Հիշյալ դիրքն է արձանագրվել Գավառի որոշ դամբանադաշտերում[33]:

Թաղման ծիսակարգի կարևոր բնութագրիչներից է ձիունի հանգչելատեղը: Սկյութական որոշ դամբարաններում հայտնաբերված տաշտաձև զետեղարանները համարվում են դիակալներ: Նման դիակալ է հայտնաբերվել Օշականի - 25 դամբարանում, որտեղ թաղված 27 ննջեցյալներից յուրաքանչյուրի կմախքի մոտ կամ ոսկորների տակ հայտնաբերվել է միևնույն կավե սարկոֆագի մեկ բեկորը: Այդ բեկորների հիման վրա հաջողվել է վերականգնել կավե դագաղը[34]: Ենթադրվում է, որ մարդիկ զոհվել են միաժամանակ, ռազմական ընդհարման հետևանքով: Բոլոր ննջեցյալներն ամփոփված են նստած վիճակում և յուրաքանչյուրի հետ ուղեկցող գույք է տեղադրված[35]: Կավե դագաղներ են գտնվել Միջագետքում՝ Ա-

---

[29] П. Н. Шульц. Скифские изваяния Причерноморья.– Античное общество. Труды конференции по изучению проблем античности. М., 1967, с. 228; В. Г. Петренко. Скифская культура на Северном Кавказе.– Археологический сборник, вып. 23. Л., 1983, с. 47.

[30] Дж. А. Халилов. Археологические находки "скифского" облика и вопрос о "Скифском царстве "на территории Азербайджана.– Проблемы скифской археологии. М., 1971, с. 183–187.

[31] Извлечение из отчета Э. А. Реслера о раскопках, произведенных им в Елизаветпольской губернии.– Отчет Императорской археологической комиссии (*այսուհետև* ՝– ОИАК) за 1897 год. СПб., 1900, с. 150–160; *Յու. Ասրյան. Հնագիտական նորույթներ Լեռնային Ղարաբաղում.– ՊԲՀ, 1973, № 2, էջ 297–298:*

[32] А. А. Ивановский. По Закавказью.– Материалы по археологии Кавказа, вып. VI, 1911, с. 116, 158.

[33] *Ե. Լալայեան. Նոր–Բայազէտի գաւառ կամ Գեղարքունիք.– "Ազգագրական հանդէս", XIV, Թիֆլիս, 1906, - 2, էջ 7, 20, նկ. 1:*

[34] С. А. Есаян, А. А. Калантарян. Ошакан, I. Ереван, 1988, с. 69–70.

[35] С. А. Есаян, А. А. Калантарян. *Նշվ. աշխ., էջ 69:*

շուրում, Մերկեզում, Ուրում[36]*: Լոգարանի ձև ունեցող նման մետաղյա տաշտեր*[37] *հայտնաբերվել են Զիվիեում և Զինջիրլիում*[38]*: Ուրի դամբարաններից երկուսում կանանց դիակները զետեղված են եղել բրոնզե դագաղներում: Ուրի հիշյալ թաղումները և Մերկեզի, Զիվիեի ու Զինջիրլիի դիակալները Ռ. Բարնետը թվագրում է մ. թ. ա. 600 թ.*[39]*: Մոտավորապես նույն ժամանակաշրջանով կարելի է թվագրել նաև Օշականի - 25 դամբարանը: Վարդենիսի դամբարանում հիմնական ննջեցյալի դին հանգչել է փայտե "տապանի վրա"*[40]*: Վիթխարի եղևնու բնից պատրաստված սարկոֆագ է գտնվել Պազիրիկի (Ալթայ) հռչակավոր դամբանաբլրում*[41]*:*

Հայաստանի մ. թ. ա. VIII դ. վերջ – VI դարերով թվագրվող դամբարաններում զգալի է բազմամարդ թաղումների *քանակը: Գուգարքի, Սևանի ավազանի և Սյունիքի դամբանադաշտերի ուսումնասիրությամբ կարելի է եզրակացնել, որ մի շարք դեպքերում հուղարկավորություններն ուղեկցվել են մարդկանց զոհաբերություններով*[42]*: Մարդկանց զոհաբերություններ են առկա Լոռի բերդի -94 դամ-*

---

[36] L. W o o l l e y. Excavations at Ur. London, 1963, p. 246, pl. 32; R. D. B a r n e t t. The Treasure of Ziwiye.– Iraq, XVIII, 1956, p. 116; C.K. W i l k i n s o n. More Details on Ziwiye.– Iraq, XXII, 1960, p. 213.

[37] *Ըստ Ռ. Բարնետի, Զիվիեի "դիակալը" պատրաստված է պղնձից (*R. D. B a r n e t t. *Նշվ. աշխ., էջ 116): Սակայն, Չ. Վիլկինսոնի հրատարակած մետաղագրական վերլուծության արդյունքներից պարզ է դառնում, որ Զիվիեի զետեղարանը, որի մեջ էլ գտնվել է "գանձը", պատրաստված է բրոնզից (անագի պարունակությունը՝ 5%). տե՛ս* C. K. W i l k i n s o n. *Նշվ. աշխ., էջ 213:*

[38] R. D. B a r n e t t. *Նշվ. աշխ., էջ 111, 114, 116, աղ. XV: Անշուշտ, պատահական չէ, որ հենց Զինջիրլիում են գտնվել հեծյալ ռազմիկների հայտնի պատկերաքանդակները: Զիավոր նետաձիգներից մեկի գոտուն սուր է կապված, նա աջ ձեռքով աղեղ է բռնել, ձախով՝ մարդու գանգ, իսկ մյուսի ձախ ուսը պաշտպանված է կլոր վահանով, ուսի ետևում էլ կապարճ է պատկերված. տե՛ս* A. I. I v a n t c h i k. Kimmerier und Skythen. M., 2001, S. 270,24; 271, Abb. 134,1,2.

[39] R. D. B a r n e t t. *Նշվ. աշխ., էջ 114–116, աղ. XVI, XVII:*

[40] А. О. М н а ц а к а н я н, Г. А. Т и р а ц я н. Новые данные о материальной культуре древней Армении.– «Известия общественных наук» *(այսուհետև՝* ИОН), 1961, № 8, с. 69; А. О. М н а ц а к а н я н. Археологические находки в селении Басаргечар, с. 40, рис. 12.

[41] E. A. G o l o m s h t o k, M. P. G r i a z n o v. The Pazirik Burial of Altai.– American Journal of Archaeology, vol. 37, № 1, 1933, pp. 34–35, fig. 4, pl. I.

[42] *Ս. Դ ն ե ջ յ ա ն. Լոռի բերդ, II (միջին բրոնզ), Երևան, 2006, էջ 85, Ե. Լ ա լ ա յ ե ա ն. Պեղումներ Նոր-Բայազետի գաւառում 1908 թուին.– "Ազգագրական հանդէս", XIX, Թիֆլիս, 1910, - 1, էջ 68;* А. А. М а р т и р о с я н. Раскопки в Головино. Ереван, 1954, с. 110. *Ժամանակին Բ. Բ. Պիոտրովսկին սեպագիր աղբյուրների տեղեկությունների հիման վրա եկել է այն եզրակացության, որ կիմերա-սկյութական արշավանքներն Առաջավոր Ասիայի ժողովուրդների համար կործանարար հետևանքներ են ունեցել (*Б. Б. П и о т р о в с к и й. Урарту. Древнейшее

բանաբլուրի ներթող թաղումում, Գավառի որոշ դամբարաններում՝ Պատաշարի - 2, 3, Արծվաքարի "Աղբրի գլուխ" դամբանադաշտի (1905 թ.) - 1–3, 6 և 1908 թ. պեղված - 1, 2, 5 դամբարաններում, Նորատուսի -21 և Սևանի ավազանի այլ դամբարաններում: Նույն երևույթի մասին կարելի է խոսել Սյունիքի մի խումբ դամբարանների առնչությամբ:

"Կիմերա-սկյութական" թաղումների համար հարկ է առանձնացնել այլ էական բնութագրիչներ ևս՝ կապված կենդանիների զոհաբերության հետ: Առաջինը ձիու *և/կամ* ձիասարքի *տեղադրումն է դամբարանում: Ձիերի զոհաբերության փաստեր են արձանագրվել Արտաշավանի - 3, 6, Լոռի բերդի - 1, 2, 4, 56, 62, 111*[43]*, Դմանիքի - 4 դամբարաններում, Գեղարքունիքում՝ "Պատաշարի" - 2 և Արծվաքարի "Աղբրի գլխի" - 1*[44]*, Աստղաձորի - 1–3*[45]*, Վարդենիսի, Սևանի ավազանի այլ թաղումներում*[46]*, Խոջալիի - 2 դամբանաբլրում, Գետաբեկի - 33, 56 և այլ դամբանային համալիրներում: Այս բոլոր դամբարաններում մահացած* հեծյալ ռազմիկներ *են ամփոփվել:*

Ձին ձիասարքի հետ է ամփոփված Արտաշավանի - 6, Շիրակավանի - 67, 122, Վանաձորի, Լոռի բերդի - 1, 2, 4, 56, 62, 111, Պատաշարի - 2, Աստղաձորի - 2, Գետաբեկի - 56 և այլ դամբարաններում, իսկ Գուսանագյուղի, Կուրթանի, Նորատուսի - 21, 22, Աստղաձորի, Կարճաղբյուրի - 27, 28, Սոդքի, "Ջոջ դար"-ի և այլ դամբաններում առկա է միայն ձիասարքը:

Ձիու և մարդու համատեղ թաղումների զգալի ավելացումը, որը նշանավորում է թաղման ծեսում փոփոխությունների նոր փուլ[47]*, հավանաբար, կապված է էթնիկական նոր խմբերի ներխուժման հետ:*

государство Закавказья. Л. 1939, с. 30*): Այս կապակցությամբ հարկ ենք համարում մեջբերել նաև այն ենթադրությունը, որ սկյութների Պյատիգորյեի տարածաշրջանում հայտնվելը ուղեկցվել է տեղական ազգաբնակչության զանգվածային ոչնչացմամբ: Տեղաբնիկների թվաքանակի զգալի անկման վերաբերյալ հիշյալ կարծիքը հիմնված է նախկին մի խումբ բնակատեղիների կենսագործունեության դադարեցման վարկածին (*Н. М. Егоров. Могильник скифского времени близ г. Минеральные Воды.– КСИИМК, вып. 58, 1955, с. 61*):*

[43] *Ս. Հ. Դևեջյան. Լոռի բերդի 1989–1990 թթ. պեղումների արդյունքները, էջ 40, նույնի՝* Some Urartian Objects from the Tombs of Lori Berd.– Aramazd, V/2, 2010, p. 76.

[44] *Ե. Լալայեան. Նոր-Բայազէտի գաւառ կամ Գեղարքունիք, էջ 8, 18, նույնի՝ Հուղարկավորության և գերեզմանների զարգացումը Հայաստանում, էջ 91–93, նույնի՝ Դամբանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, էջ 84–86:*

[45] *Հ. Հ. Մնացականյան. Բրոնզեդարյան անասնապահության զարգացումը Սևանի ավազանում. – Նյութեր Հայաստանի գյուղատնտեսության և գյուղացիության պատմության, հ. I, Երևան, 1964, էջ 232, նույնի՝* О двухцветной керамике Лчашена.– ИОН, 1957, № 5, с. 109.

[46] А. А. Мартиросян. Раскопки в Головино, с. 99.

[47] *Նույն տեղում, էջ 99;* И. Алиев. О скифах и скифском царстве в Азербайджане.– Переднеазиатский сборник, III. М., 1979, с. 5–7.

Քննարկվող դամբարաններում հուղարկավորումներն ուղեկցվել են նաև շան/գայլի զոհաբերությունով: Շան կամ գայլի կմախքներ են գտնվել Արուճի - 4, Արտաշավանի - 3, Լոռի բերդի - 1, Դմանիքի - 4 և այլ դամբաններում: Ձիու և շան/գայլի համատեղ զոհաբերություններ են կատարվել Արտաշավանի -3, Լոռի բերդի - 1, Դմանիքի - 4 և այլ դամբարաններում: Լոռի բերդի - 56 դամբարանում գտնվել են 2 առյուծի ատամներ[48]*:*

Այժմ անդրադառնանք "կիմերա-սկյութական" դամբաններում դրված իրերին: Նախկինում առանձնացված արտեֆակտերի ցուցակին (սկյութական նետասլաքներ, ակինակներ, "սկյութական տիպի" մարտական քլունգաձև կացիններ, ձիու հանդերձանքի մասեր, "կենդանական ոճով" զարդաբանված իրեր, անձնական զարդաձության առարկաներ, այլ արտեֆակտեր) հավելել ենք կախոզակով սրոցաքարերը, կոր դանակները, դաշույնները, նիզակները *և այլ իրեր: Հիմնվելով դամբաններում առկայության փաստերին՝ հիշյալ ցանկը կարելի է համալրել* ոսկրե *կամ* բրոնզե խողովակներով, մետաղյա մանյակներով, կրկնածալ ապարանջաններով *և պերճանքի այլ առարկաներով:*

Այսպես, Արագածոտնում բրոնզե եռաթև նետասլաքներ ու երկաթե դանակներ են հայտնի Օշականի - 1 և - 25 դամբարաններից[49]*, Արուճի - 4 դամբանաբլուրի վերին թաղումից, որտեղ առկա են նաև կախոզակով սրոցաքար ու ոսկրե խողովակ (աղ. II), իսկ Արտաշավանի դամբարաններում գտնվել են երկաթե դանակներ, նիզակ, դաշույնի գոտեկապ, կախոզակով սրոցաքար և բրոնզե մանյակ*[50]*: Շիրակում երկաթե նիզակներ, դանակներ և կախոզակով սրոցաքարեր են հայտնաբերվել Գուսանագյուղի "հեծյալ ռազմիկի" (աղ. III, 1, 3-5)*[51]*, Շիրակավանի II դամբարանադաշտի - 123*[52] *դամբարաններում, իսկ Գյումրիի - 8, 10*[53] *դամբարաններում*

---

[48] *Պահպանվել են մի առյուծի ստորին ծնոտը՝ լրիվ ատամնաշարով և մեկ այլ առանձնյակի ատամը. տե՛ս Ս. Կ. Մեժլումյան. Լոռի-բերդի դամբարանադաշտի հնեակենդանաբանական նյութը (1989–1990 թթ.). – ԴՀԱԱ, 1991, էջ 45;* S. Devedjyan. Some Urartian Objects from the Tombs of Lori Berd, p. 84.

[49] *Մ. Հասրաթյան. Դամբարանների պեղումներ Օշական և Աղավնատուն գյուղերի մերձակայքում. – Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1985, էջ 210, աղ. 4, դ, ե;* С. А. Есаян, А. А. Калантарян. *Նշվ. աշխ., էջ 72, 74, աղ. LII, 1-9, 11-14:*

[50] *Պ. Աւետիսեան, Ն. Ենգիբարեան, Գ. Սարգսեան. Հայաստանի նորայայտ հնագիտական յուշարձանները (Արտաշաւանի դամբարանադաշտ).– "Հանդէս ամսօրեայ", 1998, էջ 211–214, 224, աղ. Զ, 5-8, 12, Թ, 2, 7, ԺԳ, 2, 3, 14, ԺԴ, 14, 15:*

[51] *Գ. Թումանյան. Գուսանագյուղի դամբարանը հին հայկական մշակույթի սկզբնավորման համատեքստում. – Հին Հայաստանի պատմության և մշակույթի հարցեր, Երևան, 2001, էջ 20, 26:*

[52] *Ռ. Մ. Թորոսյան, Օ. Ս. Խնկիկյան, Լ. Ա. Պետրոսյան. Հին Շիրակավան, Երևան, 2002, էջ 129–130, աղ. LXXXIII, LXXXIV:*

սրոցաքարը բացակայում է: Երկաթե նիզակ է դրված եղել նաև Գյումրիի - 6 և "ԽՈջՌփՌռ տՏրՑ" տեղանքի - 4 դամբաններում: Տավուշում կախօղակով սրոցաքար, տարբեր խողովակներ, մանյակներ, նիզակներ, դաշույններ և երկաթե կոր դանակներ են գտնվել Բերդի[54]*, Աստղիբլուրի*[55] *և Իջևանի*[56] *դամբարաններում: Վարաժնունիքում՝ Խոտանոցի դամբանադաշտի կրոմլեխներում, համատեղ են հանդես գալիս բրոնզե խողովակները, մանյակները, կախօղակով սրոցաքարերը, երկաթե կոր դանակները, դաշույններն ու նիզակները*[57]*: Տաշիրում երկաթե նիզակների և կոր դանակների հետ բրոնզե եռաթև սկյութական նետասլաք է հայտնաբերվել Մակարաշենի դամբարաններից մեկում: Սկյութական նետասլաքներ, երկաթե դաշույններ ու նիզակներ են հայտնաբերվել Լոռի բերդի - 56 դամբարանի 2-րդ խցում, երկաթե կոր դանակներ, բրոնզե մանյակներ և փոքրիկ խողովակներ՝ - 2 դամբանաբլրի ներթող թաղումում*[58]*: Ակների դամբանադաշտում հայտնաբերվել են երկաթե և բրոնզե մանյակներ, սկյութական նետասլաք, երկաթե նիզակներ, դաշույններ, կոր դանակներ, սրոցաքար*[59]*: Շեյթան դաղի, Ախթալայի, Մուսիերիի որոշ դամբաններում երկաթե նիզակները, դաշույններն ու դանակները համակցվում են կախօղակով սրոցաքարերի, բրոնզե մանյակների և եռաթև կամ երկթև սկյութական նետասլաքների հետ*[60]*: Երկաթե նիզակներ, դաշույն, կոր դանակ, սկյութական բրոնզե նետասլաք, բրոնզե խողովակներ են գտնվել Ղաչաղա-*

---

[53] А. А. Мартиросян. О древнем поселении и могильнике близ Ленинакана.– КСИИМК, вып. 55, 1954, с. 110–111, 114, рис. 45, 1, 5.

[54] С. Есаян. Могильник раннеармянского времени в поселке Берд Шамшадинского района.– ИФЖ, 1969, № 4, с. 287–291, таб. II, 1-16; III, 10.; **Նույնի՝** Древняя культура племен Северо-Восточной Армении, с. 156–158.

[55] С. А. Есаян. Астхиблурский могильник.– «Вестник общественных наук» АН АрмССР, 1968, № 6, с. 85, 87, 88, таб. II, 1; IV, 1, 2, 5-7, 16-18.

[56] А. А. Мартиросян. Армения в эпоху бронзы и раннего железа, с. 277; С. А. Есаян. Археологические находки близ поселка Иджеван.– ИОН, 1961, с. 73–74, 78, 80–82, рис. 1, 2, 9.

[57] А. О. Мнацаканян. О раскопках могильников у села Головино (Армения).– КСИИМК, вып. XLVI, 1952, с. 65–67, рис. 14, 1-5; А. А. Мартиросян. Армения в эпоху бронзы..., с. 270–272, 277, рис. 105, 1-6; 108, 7; **Նույնի՝** Раскопки в Головино, с. 32–41, таб. I, 7, 11; II, 1, 2; III, 1; VIII, 7, 8; XIII, 5, 6, 8, 11, 12, 16, 27, 33, 40; XV, 7, 12, 13; XVI, 1, 5-13.

[58] *Ս. Դևեջյան. Լոռի բերդի 1989–1990 թթ. պեղումների արդյունքները, էջ 40;* С. Г. Деведжян. *Նշվ. աշխ., էջ 60–64, աղ. XXIII, 3, 5, XXIV, 1, XXV, 14:*

[59] Н. Я. Марр. Производство археологических раскопок в Армении.– ОИАК за 1893 год. СПб., 1895, с. 36; Е. С. Такайшвили. Производство археологических раскопок в Тифлисской губ.– ОИАК за 1894 год. СПб., 1896, с. 14–15; А. А. Мартиросян. Раскопки в Головино, с. 10, 49, таб. XVII, 5-10.

[60] J. de Morgan. Mission scientifique au Caucase, I. Paris, 1889, pp. 51–53, 59–60, 69–71, 100, 131–135, fig. 12–14, 18, 26, 58, 121–126, 132–135.

նի դամբանաբլրի - 4 ներթող թաղումում[61]: Ծոբոփորում հայտնի են Սիոնի քարարկղային դամբարանները, որոնցում գտնվել են երկաթե նիզակներ, դաշույն, կոր դանակներ, սրոցաքար, սկյութական տիպի նետասլաք[62]: Բրոնզե զարդաբանված խողովակ, երկաթե կոր դանակներ և դաշույններ են հայտնաբերվել Սադախլոյի դամբանադաշտում[63], իսկ սկյութական նետասլաքներ են ի հայտ եկել Իմիրիս գորայի - 4 դամբանաբլրի ներթող թաղումում[64]: Պատմական Քուիշափոր գավառում նման իրեր են գտնվել Ղրմախնիսթավիի դամբաններում[65]: Դմանիքում հայտնաբերվել են երկաթե նիզակներ, դաշույն և սուր[66]: Քննարկվող հավաքածոյին Թռեղքում նմանություն է դրսևորում Բեշտաշենի դամբանադաշտի քարարկղային թաղումների գույքը[67]: Մազազում երկաթե նիզակներ, դաշույն, կոր դանակներ, բրոնզե մանյակներ, խողովակներ և եռաթև սկյութական նետասլաքներ են գտնվել Ջրառատի կուր-արաքսյան դամբանաբլրի ներթող թաղումում[68]: Բջնիի դամբանադաշտում գտնվել են երկաթե նիզակներ, բրոնզե մանյակներ և խողովակներ[69]: Ջուգահեռներ են դիտվում Սևանի ավազանի դամբանադաշտերի թաղման նյութերում[70]: Կարճաղբյուրի դամբարաններում հայտնաբերվել են երկաթե նիզակներ, կոր դանակներ, դաշույն և սկյութական նետասլաքներ[71]: Ծովակի դամբարանադաշտում գտնվել են բրոնզե և երկաթե դաշույններ, սրեր, մանյակներ, խողովակներ, իսկ Վարդենիսի հիմնահողային դամբարանում հայտնաբեր-

---

[61] А. А. Мартиросян. Раскопки в Головино, с. 15.

[62] მ. მენაბდე, თ. კიღურაძე. სიონის არქეოლოგიური ძეგლები. თბილისი, 1981, გვ. 77–104, ნახ. 25, 4, 5, 28, 5, 30, 1, 34, 3, 4.

[63] J. de Morgan. *Նշվ. աշխ., էջ 75, 95, 123, նկ. 43, 102:*

[64] Отчет Квемо Картлийской археологической экспедиции (1965–1971 гг.). Под ред. А. Джавахишвили, О. Джапаридзе. Тбилиси, 1975, с. 162, 211, рис. 60, 1-9.

[65] აბრამიშვილი რ.მ. (რედ.). ღრმახევისთავის არქეოლოგიური ძეგლები. თბილისი, 1980, გვ. 108, 112, 114–115, 120–124, 129–130, 161, 180–181, ნახ. 86, 94, 102, 105, 106, 116, 155, 178, ტაბ. IX, XII, XIV–XVI, XXIII, XXX.

[66] А. А. Мартиросян. Раскопки в Головино, с. 51–52.

[67] Б. А. Куфтин. Археологические раскопки в Триалети, I. Тбилиси, 1941, с. 44–45, рис. 41–43.

[68] А. О. Мнацаканян, Г. А. Тирацян. *Նշվ. աշխ., էջ 71–72, ³Х. 1;* Г. А. Тирацян. Культура древней Армении. VI в. до н.э.–III в. н.э. (по археологическим данным). Ереван, 1988, с. 32, 42–47, рис. 11, 14.

[69] А. О. Мнацаканян, Г. А. Тирацян. *Նշվ. աշխ., էջ 73;* А. А. Мартиросян. Раскопки в Головино, с. 54.

[70] *Ե. Լալայեան. Նոր–Բայազէտի գաւառ կամ Գեղարքունիք, էջ 18–20, նույնի՝ Պեղումներ Նոր–Բայազէտի գավառում 1908 թուին, էջ 65–68, Ն. Գ. Ենգիբարյան. Ուրարտական դամբարաններ Նորատուսից.– ԴՀԱԱ, 1991, էջ 67:*

[71] *Ի. Ա. Կարապետյան. նշվ. աշխ., էջ 28, Օ. Խնկիկյան. Պեղումներ Տանձավեր և Շիկահող գյուղերում.– ՊԲՀ, 1975, № 2, էջ 245:*

վել են երկաթե նիզակներ, դաշույն և բրոնզե խողովակներ[72]*: Սյունիքում՝ Հարժիսում և Խնածախում, հայտնաբերվել են կախիչակով սրոցաքարեր, սկյութական եռաթև նետասլաք, դաշույններ, երկաթե նիզակներ, կոր դանակ և այլն: Կախիչակով սրոցաքարեր են գտնվել նաև Ախլաթյանի "Զաղացի գլուխ" և "Դոլայի" դամբանադաշտերում, Անգեղակոթի - 2 դամբարանում, իսկ նիզակներ ու երկաթե դանակներ՝ "Զաղացի գլխի" - 1–3 և Անգեղակոթի - 2 դամբաններում*[73]*: Արցախում երկաթե կոր դանակ, սրոցաքար, սկյութական եռաթև նետասլաքներ են հայտնաբերվել Ներքին Հոռաթաղում, իսկ վերջիններիս հետ նաև բրոնզե և երկաթե նիզակներ, բրոնզե դաշույններ՝ Գետաբեկի դամբանադաշտերում*[74]*: Փայտակարանում բրոնզե եռաթև սկյութական նետասլաք և երկաթե կոր դանակներ են հայտնի Հրաքոտ-Պերոժ գավառից (Փոքր դամբանաբլուր): Ուտիքում կախիչակով սրոցաքարեր, երկաթե նիզակներ, դաշույններ, կոր դանակներ, բրոնզե եռաթև նետասլաքներ են գտնվել Մինգեչաուրի թաղումներում*[75] *և Գարդմանում (Սարիթափ)*[76]*: Նորշունթեփեում հայտնաբերվել են երկաթե նիզակներ և կոր դանակներ*[77]*: Սկյութական նետասլաքներ են գտնվել Ամասիայի մարզի դամբաններում*[78]*:*

"Կիմերա-սկյութական" համալիրներին հատկանշական են նաև ասպանդակաձև ծայրերով լկամները, բոլորատեգերը, գուրզերը, բրոնզե գոտիները, մետաղյա և քարե թասերը *և այլն: Այսպես, Հայկական լեռնաշխարհի հուշարձաններից ասպանդակաձև վերջավորություններով բրոնզե լկամներ են հայտնաբերվել Գուսանագյուղում (աղ. III, 6), Նորշունթեփեում, Իմիրլերում*[79]*: Ուսումնասիրողները*

---

[72] *Ե. Լալայան. Դամբանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, էջ 107–113;* А. О. Мнацаканян. Археологические находки в селении Басаргечар, с. 40, 42–43, рис. 14, 1-3.

[73] *Օ. Ս. Խնկիկյան. Դամբարանների պեղումներ Հարժիս գյուղում.– Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում, I, Երևան, 1993, էջ 98, 101, աղ. XCVII, 1, XCVIII, 5, 7-9, 12, նույնի՝ Պեղումներ Գորիսի շրջանում.– ՊԲՀ, 1985, № 3, էջ 168, 170, աղ. II, 8, նույնի՝* Syunik During the Bronze and Iron Ages, pp. 91, 251, pl. XC, 1-3, 11; *Մ. Հասրաթյան. Հնագիտական հետազոտություններ Սիսիանում, էջ 169–174:*

[74] *Յու. Ասրյան. նշվ. աշխ., էջ 297–298, նույնի՝* Нагорный Карабах в эпоху поздней бронзы и раннего железа (II–I тыс. до н.э.). Степанакерт, 1999, с. 23–24; А. А. Ивановский. *Նշվ. աշխ., էջ 108, 116, 120, 133, 137, 146–147, 162, 186, աղ. III, 12-13, V, 1-3, 7-8, VIII, 35, 36:*

[75] С. М. Казиев. Археологические раскопки в Мингечауре.– Материальная культура Азербайджана, I. Баку, 1949, с. 25, 27, 30, рис. 18, 21, справа; Г. М. Асланов и др. *Նշվ. աշխ., էջ 96, 117:*

[76] Дж. А. Халилов. *Նշվ. աշխ., էջ 185,* М. А. Кашкай, И. Р. Селимханов. Из истории древней металлургии Кавказа. Баку, 1973, с. 104, 109–200, рис. 15, 184-187.

[77] A. I. Ivantchik. *Նշվ. աշխ., էջ 21–27, նկ. 4, 1, 2, 4, 10:*

[78] V. Ű nal. Zwei Gräber Eurasischer Reiternomaden im Nördlichen Zentralanatolien.– Beiträge der Allgemeinen und Vergleichenden Archäologie, № 4. Műnchen, 1982, S. 68, 81.

[79] V. Ű nal. *Նշվ. աշխ., էջ 68, նկ. 1, 4:*

գտնում են, որ ձիասարքի նմանատիպ բաղադրամասերը բնորոշ են կիմերա-սկյութա-սակական մշակույթներին[80]: Դրանք մ. թ. ա. VII–VI դարերում տարածվում են Ենիսեյ գետից մինչև Դանուբ[81]:

Երկաթե կամ բրոնզե բոլորատեգեր են դրված եղել Գուսանագյուղի (աղ. III, 2), Գյումրիի, Խոտանոցի, Ակների, Ախլաթյանի, Գետաբեկի, դամբարաններում: Սրանք, հիմնականում, ունեին կլոր սուր ծայր, թեթև ու կարճ էին նիզակներից[82] և հարմար էին նետելու համար:

Հայկական լեռնաշխարհի սկյութական թաղումներում տեղադրվել են նաև բրոնզե, երկաթե և քարե գուրզեր, որոնք ռազմիկների զենքի մի տեսակն են կազմել: Գուրզեր են հայտնաբերվել Դեբեդի ավազանում (Ակների դամբանադաշտ), Սևանի ավազանում (Աստղաձոր, Գավառ)[83], Արցախում (Արևշատ և Զինարիի - 5)[84], Ուտիքում (Մինգեչաուր):

Մինչ այժմ մենք քննության էինք առնում այն հավաքածուները, որոնք գտնվել են դամբարաններում: Սակայն վերը քննարկված առարկաների բազմաթիվ օրինակներ հայտնաբերվել են նաև հին բնակավայրերի պեղումներով, կան պատահական գտածոներ ևս: Այսպես, Հայկաբերդի (Չավուշթեփե) պեղումներով հայտնաբերվել են սկյութական նետասլաքներ և ձիասարքի մասեր[85]: Շիրակավանի հին բնակավայրում հնագիտական աշխատանքների ժամանակ ի հայտ են եկել կոթառավոր բրոնզե նետասլաքներ, իսկ Գյումրիի հին բնակատեղում՝ երկաթե

---

[80] А. А. Иессен. К вопросу о памятниках VIII–VII вв. до н.э. на юге Европейской части СССР.– СА, XVIII, 1953, с. 52, 79–89; *Նույնի՝* Некоторые памятники VIII–VII вв. до н.э. на Северном Кавказе.– Вопросы скифо-сарматской археологии (по материалам конференции ИИМК АН СССР 1952 г.). М., 1954, с. 112, 118, рис. 7; А. И. Тереножкин. Киммерийцы. Киев, 1976, с. 149; С. А. Есаян, М. Н. Погребова. *Նշվ. աշխ., էջ 89–92;* М. Н. Погребова, Д. С. Раевский. Ранние скифы и Древний Восток. К истории становления скифской культуры. М., 1992, с. 204, 206, рис. 32, 6; А. Н. Бернштам. Основные этапы истории культуры Семиречья и Тянь-шаня.– СА, XI, 1949, с. 348– 349, рис. 42; О. А. Вишневская, М. А. Итина. Ранние саки Приаралья.– Проблемы скифской археологии, М., 1971, с. 201, рис. 5,1, 3-6 ***և այլն:***

[81] А. И. Тереножкин. *Նշվ. աշխ., էջ 149, 192, նկ. 97, II, 27-29;* А. А. Иессен. К вопросу о памятниках VIII–VII вв. до н.э., с. 89; А. П. Уманский. Случайные находки предметов скифо-сарматского времени в Верхнем Приобье.– СА, 1970, № 2, с. 169–170.

[82] М. И. Артамонов. Киммерийцы и скифы. Л., 1974, с. 39.

[83] С. А. Есаян. Оружие и военное дело древней Армении. Ереван, 1966, с. 55–57, таб. X, 9-10.

[84] Н. В. Минкевич–Мустафаева. Об археологических находках из сел. Доланлар.– Материальная культура Азербайджана, I. Баку, 1949, с. 66–67, таб. VI, 6; А. А. Ивановский. *Նշվ. աշխ., էջ 159, աղ. XV, 1, 2:*

[85] A. Erzen. Çavuştepe, I. Ankara, 1978, res. 38, 41, 42, lev. XLV, XLVII.

կոր դանակ[86]: Արգիշտիխինիլիում հայտնաբերվել են կախօղակով սրոցաքարեր, երկաթե (կոր) դանակներ, բրոնզե եռաթև նետասլաքներ, երկաթե ակինակ[87]: Արմավիրում գտնվել են երկաթե կոր դանակներ, սկյութական տիպի բրոնզե նետասլաքներ, բոլորատեգեր, ոսկրե ճարմանդներ և այտաճան (վերին եզրը՝ խոյագլուխ, ստորին մասը՝ ոճավորված կճղակի տեսքով)[88]: Թեյշեբաինիի պեղումներով գտնվել են կախօղակով սրոցաքարեր, սկյութական բրոնզե նետասլաքներ, երկաթե կոր դանակներ, սրբազան ծառի ոճավորված պատկերով զարդաբանված բրոնզե գոտի և ձիասարքի խոյագլուխ ճարմանդներ՝ պատրաստված բրոնզից ու եղջյուրից[89]: Էրեբունիում հայտնաբերվել են երկաթե կոր դանակներ, բոլորատեգ և հարյուրից ավելի սկյութական տիպի նետասլաքներ[90]: Կարճաղբյուր բնակավայրի ստորին շերտի պեղումներով ի հայտ է եկել սկյութական արխաիկ նետասլաք[91]: Նորաշենի ամրոցում գտնվել են կախօղակով սրոցաքարեր, երկաթե կոր դանակներ, տեգեր, "քլունգաձև" կացնիկ, սկյութական տիպի բրոնզե նետասլաքներ[92]: Աստղիբլուր ամրոցում ձեռք բերված արտեֆակտերից քննարկվող հարցի առնչությամբ հիշատակման են արժանի երկաթե կոր դանակները

---

[86] С. А. Есаян, М. Н. Погребова. *Նշվ. աշխ., էջ 29:* А. А. Мартиросян. О древнем поселении..., с. 108.

[87] А. А. Мартиросян. Аргиштихинили. Ереван, 1974, с. 145, 150, 157, 170, 172–173, рис. 89а, 1; 98, 108.

[88] Б. Н. Аракелян. О некоторых результатах археологического изучения Древнего Армавира.– ИФЖ, 1969, № 4, с. 171, 172, рис. 17; Г. А. Тирацян. Урартский Армавир (По данным археологических раскопок).– Культура Востока. Древность и раннее средневековье. Л., 1978, с. 111, рис. 6; *Նույնի՝* Armawir.– Revue des ţtudes Armnniennes, t. 27. Paris, 1998–2000, p. 248, fig. 58. *Երկաթե բոլորատեգ է գտնվել նաև Արմավիրի - 15 սենյակից (1983 թ. պեղումներով):*

[89] Б. Б. Пиотровский. Кармир–Блур, I, с. 38, 55, 86, 93, 96, рис. 17, 32, 55, 63; *Նույնի՝* Кармир–Блур, II. Ереван, 1952, с. 28, 36–37, 48, 54, рис. 11,справа, 19, 25; *Նույնի՝* Кармир–Блур, III. Ереван, 1955, с. 17, 40–41; *Նույնի՝* Археология Закавказья, с. 125; А. А. Мартиросян. Город Тейшебаини. Ереван, 1961, с. 98–99, рис. 38б.

[90] Б. Б. Пиотровский. Кармир–Блур, II, с. 241. *Մ. Իսրայելյան. Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն (ըստ արձանագրական ու հնագիտական տվյալների), Երևան, 1971, էջ 90–94, նկ. 11,* И. М. Лосева. Раскопки цитадели урартского города Ирпуни.– КСИИМК, вып. 58, 1955, с. 50; К. Оганесян. Эребуни. Ереван, 1968, с. 60; С. И. Ходжаш, Н. С. Трухтанова, К. Л. Оганесян. Эребуни. М., 1979, с. 103, 128–129, рис. 102, 105.

[91] *Ի. Ա. Կարապետյան. նշվ. աշխ., էջ 17, աղ. 40, 4:*

[92] С. А. Есаян. Древняя культура племен Северо-Восточной Армении, с. 63—64, 67, 74—77, таб. 60, 3; 61, 9, 10; 62, 7-9, 13, 14; 63, 4, 5.

Աղյուսակ 1



Աղյուսակ 2



Աղյուսակ 3



և սկյութական երկթև նետասլաքը, իսկ Բերդատեղում՝ սրոցաքարերը և երկաթե կոր դանակները[93]: Տիպիկ սկյութական նետասլաքներ են հայտնաբերվել Գանձակի պեղումներով[94]: Հ. Ա. Օրբելին սկյութական տիպի բրոնզե նետասլաքներ է հավաքել Հայկաբերդում և Թոփրաքկալեում[95]: Ռ. Մ. Թորոսյանը հնագիտական տեղազննության ընթացքում կոթառավոր նետասլաքներ է հայտնաբերել Նորակերտ գյուղի դաշտում և Գրամփայի կիկլոպյան ամրոցի շրջակայքում[96]:

Հին բնակավայրերի պեղումներով գտնված արտեֆակտերի համադրումը կից դամբանադաշտերում հայտնաբերված իրերին՝ կարող է նպաստել քննարկվող խնդրի վերաբերյալ եղած պատկերացումների ճշգրտմանը և գիտելիքների ամբողջացմանը: Իսկ առկա փաստերն արդեն թույլ են տալիս եզրակացնել, որ կիմերա-սկյութական մշակութային ընդհանրությունն իր որոշակի տեղն ունի Հայկական լեռնաշխարհի համաժամանակյա հնագիտական մշակույթների շարքում: Հետևաբար, կիմերական և սկյութական մշակույթների կազմավորման գործընթացում չի կարելի անտեսել նաև ուրարտական ու էթիոնյան մշակույթների անուրանալի դերը:

ПРОЯВЛЕНИЯ КИММЕРИЙСКО-СКИФСКОЙ КУЛЬТУРНОЙ ОБЩНОСТИ НА АРМЯНСКОМ НАГОРЬЕ
(По археологическим данным)

ГАРЕГИН ТУМАНЯН

Резюме

В киммерийско-скифских могильниках Армянского нагорья определенное число составляют впускные погребения. Одной из причин этого явления может быть отсутствие постоянного местожительства. О скифской принадлежности захоронения может свидетельствовать каменное антропоморфное изваяние, входящее в состав погребального комплекса. Для скифского погребального обряда также характерно вытянутое положение костяка на спине. На основании некоторых признаков ритуала в ряде случаев можно сделать заключение, что основные захоронения сопровождались жертвоприношениями лю-

[93] С. А. Есаян. Астхиблурский могильник, с. 93–94; *Նուլյնի՝* Древняя культура племен Северо–Восточной Армении, с. 40, 48, 52, таб 26, 10, 11, 18.

[94] Е. Крупнов. Глиняная головка “Скифа» из Закавказья.— «Вестник древней истории», 1940, № 3—4, с. 371.

[95] Б. Б. Пиотровский. Археология Закавказья, с. 125; *Նուլյնի՝* Ванское царство, с. 237, рис. 79, а-г.

[96] С. А. Есаян, М. Н. Погребова. *Նշվ. աշխ., էջ 28:*

дей. Для киммерийско–скифских захоронений выделяется еще один характерный элемент–нахождение в погребальном комплексе коня и/или конского убора. В данных погребениях, очевидно, хоронились трупы воинов-всадников.

Исходя из положения, что в Армянское нагорье вторглись вооруженные воины-всадники, к упомянутому списку артефактов скифской культуры можно добавить следующую группу предметов: точильные камни с кольцом для подвешивания, кривые ножи, пики, булавы, некоторые типы бронзовых поясов, металлические чаши-фиалы. Основываясь на фактах наличия в погребениях, этот список можно пополнить костяными и бронзовыми трубочками и разными предметами роскоши.

Множество образцов упомянутых предметов обнаружены также при раскопках древних поселений, есть и случайные находки. Сопоставление артефактов, найденных раскопками древних поселений, с предметами, обнаруженными из прилегающих могильников, может способствовать дополнению и уточнению наших знаний о данной проблеме.

MANIFESTATIONS OF CIMMERIAN-SCYTHIAN CULTURAL AFFINITIES IN THE ARMENIAN HIGHLAND
(On archaeological data)

GAREGIN TUMANYAN

S u m m a r y

In Cimmerian-Scythian burial grounds of the Armenian Highland there is a definite number of intrusive burials. One of the reasons for this phenomenon is, perhaps, the absence of a permanent settlement. The “Scythian” belonging of a burial can be evidenced by the presence of an anthropomorphic funerary sculpture in the sepulchral complex. Skeleton’s stretched position on its back is also typical for Scythian funeral rite. Based on some characteristics of the rite, in a number of instances it could be concluded that the main funerals were accompanied by human sacrifices. For Cimmerian-Scythian burials, one more important feature is distinguished – the presence of a horse and/or horse tack in the sepulchral complex. Obviously, militant horsemen corps were buried in these tombs.

Based on the concept that brigades of Cimmerian and Scythian militant horsemen invaded Armenian Highland, we can add the following group of items to the above-mentioned list of artifacts of Scythian culture: whetstones with hanging rings, curved knives, darts, maces, some types of bronze belts, metallic bowls or pots. Based on the facts of findings in burials, this listing could be supplemented with bone or bronze tubes and other luxury goods.

Many examples of the mentioned goods were found also during excavations of ancient settlements, there are accidental findings as well. Comparison of goods uncovered during excavations in ancient settlements with those found in nearby burial grounds could contribute to adjusting and adding our knowledge on the issue.